

ՄԵԶՄՈՒՄԻ ԱԽՊԱՐ

DIRECTION DU JOURNAL
MEDJMOUA-I-AHBAR
Grand'Rue de Pera, Taksim 65

Համբարստ իբի ճեմա եամի ՉԱՐՇԵՆՊԻՅ ՎԵ
ՃՈՒՄԱ ԻՐԹԵՍԻ կիւնիքի մէջը օրումուր:

ՆԻԽԱՄԷՍԻ
30 ԲԱՐԱ

مجموعه اخبار
لكاوغای تقیم جاده می نورس 70

ԱՊՐԵՆԻ ԶԻՅԱԹԱՐԻՐ. = Իսթանպուլ իշին սէնէլիկի 60 ղշ. = 6 ալըզը 35. = Թարա իշին սէնէլիկի 85 = 6 Ալըզը 45 ղշ. տըր: = Մէմարիքի լէնէպիէ իշին սէնէլիկի 20 ֆր. տըր: = Բօսթա իւնիքի պիզէ ալիտ տըր: = 15 կիւնիք նիւսիսէ 60 բա. տըր: = ԻԱՆԱԹ ՇԱՐՇԵՆՊԻՐ. = Ինիքի սառիֆէնի սըրաքը 3, 266ֆր. Վէ 3իւնիք սառիֆէնի սըրաքը 3, Վէ 4իւնիք սառիֆէնի սըրաքը 1 ղշ. տըր: = 2օգ տէֆա տէրճ Իտիլէճէք իւնիք իշին սըրաքը 1 ղշ. տըր: = 2օգ տէֆա տէրճ Իտիլէճէք իւնիք իշին սըրաքը 1 ղշ. տըր: = 2օգ տէֆա տէրճ Իտիլէճէք իւնիք իշին սըրաքը 1 ղշ. տըր:

Ղազէթայա միւթէպիլիք իւնիք ՅՈՒՀԱՆՆԷՍ ԹՕԼԱՅԵԱՆԱ միւրաճապ օրումուր = Իտարէխանէ՛ Պէյոլուրուտա ճաւտէլիք 65:

ՄԱՐԴՆ ԵՒ ԿԵՆՏՐՈՆԵՐ

Նոր բաղդատեանք մարդն անասնոյ հետ, կը գտնենք թէ՛ ի մին և թէ՛ ի միւս մարմին մը, կազմակերպուած նիւթ մը, զգայութիւններ, միտ և արիւն, շարժում և անթիւ նման բաներ. բայց այս ամէն նմանութիւնք արտաքին ըլլալով չեն բաւեր մեզի՝ վնասելու համար թէ մարդն և անասունը համարուեն են: Երկուքին ալ բնութիւնը հասկնալու համար պէտք է ճանչնալ կենդանւոյ ներքին յատկութիւնները, ինչպէս որ մերինները կը ճանչնանք, և որովհետեւ կարելի չէ երբեք ծանօթանալ կենդանւոյ ներքը պատահած բաներուն, և կամ թէ ինչ դասակարգէ, կամ ինչ տեսակէ կրնան ըլլալ իր զգացումները համեմատութեամբ մարդու զգացմանց, մենք միայն արգասեաց վրայ կրնանք դատել, միայն և միւսին բնական գործողութիւններուն արդիւնքները բաղդատելով: Տեսնենք ռուսին այդ արդիւնքներն, խոստովանելով նախ առանձնական նմանութիւնները և քննելով միմիայն տարբերութիւններն, նոյն իսկ ամենէն ընդհանուր:

Պիտի ընդունիք որ ամենէն թաճաւ միտ մարդ մը բաւական է կառավարելու ամենէն հանճարեղ կենդանին. նա կը տիրէ անոր վրայ, զայն իր պիտոյիցը կը գործածէ և աւելի բնութեամբ վերադնուութիւն ունենալուն համար քան թէ գործութիւն կամ ճարտարութիւն:

Եւ որովհետեւ ունի պատճառաբանեալ գիտում մը, գործողութիւններու բարեկարգութիւն մը և շատ մը միջոցներ, անոնցմով կը ստիպէ կենդանին իրեն հասցանագետ, մինչդեռ չենք տեսներ որ այն կենդանիները որ աւելի զօրաւոր և ճարպիկ են տիրանան միւսերու վրայ, և զանաք իրենց պիտոյից գործածեն. զօրաւորագոյն կենդանիները տկարագոյնները կ'ուսան, սակայն այս գործողութիւնը մի միայն պէտք մը, անորոշ մը կ'ենթադրէ. ունի շատ տարբեր յատկութիւններ քան զայն որ կրնայ արտադրել միեւնոյն նպատակի ուղղուած շատ մը գործողութիւններ:

Եթէ անասունները այս կարողութեամբ օժտուած ըլլային, պիտի տեսնէինք որ անոնցմէ շատերը պիտի իշխէին միւսերուն վրայ, պիտի ստիպէին զանոնք իրենց կերակուր բերելու և օգնելու երբ հրեանդ կամ վիրաւորուած են: Արդ բոլոր կենդանեաց մէջ չկայ ո և է նշան մը այս հրեապատկութեան, ոչ մէկ երեւոյթ մը որով անոնցմէ մէկը ճանչնայ կամ զգայ իր բնութեան բարձրութիւնը միւսներուն բնութեան վրայ, ուստի պէտք է համարել թէ անոնք ամենն ալ համարուեն են, և եզրակացնել նմանապէս թէ մարդուն բնութիւնը ոչ միայն շատ վեր է անասունի բնութենէն, հասկա նաեւ բոլորովին տարբեր:

Մարդն՝ արտաքին նշանով մը իր մէջ պատահածը կը յայտնէ, իր մտածմունքը կը հաղորդէ խօսքով, այս նշանը հասարակ է բոլոր մարդկային ցեղին, վայրենի

մարդն ալ կը խօսի, քաղաքակրթեալն ալ կը խօսի և այս՝ երկուքին համար ալ բնականէն է: Եթէ ոչ մէկ կենդանի այս մտածմունք նշանը ունի, գործարանի պակասութիւնէն չէ, ինչպէս հասարակօրէն կը կարծուի. անդամապիւնները հաստատած են թէ կապիկին լեզուն մարդուն լեզուն չափ կատարեալ է, ուրեմն պիտի խօսէր եթէ խորհէր, եթէ իր մտածմանը կարգը մերիններուն նմանութիւնը ունենար, մեր լեզուն պիտի խօսէր. և եթէ աղբիւրով որ միակ կապիկ մտածմունք ունենայ, միւս կապիկներուն հետ պիտի խօսէր, ինչպէս որ մենք տեսնուած չէ անոնց միմիայն խօսիլ կամ հաւելը. ուստի ոչ իսկ մտածմանց կարգ մը, չարունակութիւն մ'ունեն ըստ իրենց եղանակին (չատ հետեւ մերիններուն ման ունենալէ). անոնց մէջ կարգաւոր, չարունակեալ բան մը չունիլով, քանի որ յարգարեալ և դուրադուրեալ նշաններով բան մը չեն յայտնար. ուրեմն մտածմունք չունին, նոյն իսկ ամենապիտեղ աստիճան:

Անասնոց չխօսելուն պատճառն գործարանի պակասութիւնէն չլլալով ճամբիւր է, որովհետեւ բազմաթիւ տեսակ կենդանիներ ծանօթ են որոնց կ'ուսուցուի բաւեր հնչել և նոյն իսկ բաւական երկայն խօսքեր կրկնել, և գուցէ անոնցմէ պիտի գտնուէին այնպիսիներ, որոնց կարելի պիտի ըլլար, եթէ այդ ներդրութիւնը յանձն առնուէր, քանի մը ձայներ հնչել տալ. բայց երբեք կարելի եղած չէ անոնց մէջ յղացնել այս բառերուն նշանակած գաղափարն. անոնք կը թուին սոքովածներ կրկնել և նոյն իսկ արտասանել, ինչպէս արձագանք մը կամ արուեստական մեքենայ մը. անոնց մէջ մեքենական գործութիւնները կամ նիւթակնի գործարանները չեն որ կը պակսին, այլ մտաւորական կարողութիւնը, մտածմունքը: Ուրեմն լեզուն՝ մտածմանը չարունակութիւն մը եթէ աղբիւրուուն համար է որ կենդանիները զայն չունին: Վասն զի նոյն իսկ երբ ուղեւոր անոնց չնորհել բան մը՝ նման մեր առաջին ըմբռնմանց և մեր ամենէն թանձր և մեքենական զգացողութեանց, հաւաստի կը թուի թէ անկարող պիտի ըլլային գաղափարաց այս յարակցութիւնը կազմելու, որն որ միայն կարող է արտադրել խորհրդածութիւնը յորում կը կայանայ սակայն մտածութեան իսկութիւնը. իրենց չմտածելուն և չխօսելուն պատճառն այս է որ չեն կրնար ոչ մէկ գաղափար իրարու միացընել, միեւնոյն պատճառաւ է որ բան մը չեն հնարեր, չեն կատարելագործեր:

Եթէ խոսկալու (նոյն իսկ ամենապիտեղ աստիճան) կարողութեամբ օժտուած ըլլային, կարող պիտի ըլլային տեսակ մը յառաջադիմութեան և աւելի ճարտարութիւն պիտի աստանային, այս բոլորն կողմերը առաջուրէն աւելի արուեստով և հաստատութեամբ պիտի շինէին իրենց բնականութիւնը. միջոցն՝ ամէն օր, իր բնական գուրջ պիտի կատարելագործեր, որովհետեւ՝ եթէ եթէ աղբիւր թէ այս գուրջ ըստ կարելւոյն կատարեալ է, այս միջատին չնորհուած կ'ըլլուի մեր ունեցածէն աւելի միտք և մերինն վեր ինչ մը, որով

յանկարծ պիտի նշմարէր կատարելութեան այն վերջին կէտը՝ որուն պէտք է տանի իր գործը, մինչդեռ մենք իսկ յայտնաւորէնք այդ կէտը չենք տեսներ և պէտք ունինք շատ մը խորհրդածութեան, ժամանակի և վարժութեան մեր ամենապիտեղ մէկ արուեստը կատարելագործելու համար:

Ուսկից կրնայ առաջ գալ կենդանեաց բոլոր գործերուն մէջ այս միակերպութիւնը: Ինչո՞ւ իւրաքանչիւր տեսակ միջատ միեւնոյն բանը և միեւնոյն կերպով կ'ընէ, եւ ինչո՞ւ համար իւրաքանչիւր անասուն ոչ աւելի լաւ կ'ընէ և ոչ աւելի գէշ քան ուրիշ մը: Իրենց գործողութեանց մեքենական և միմիայն նիւթական արդիւնքներ ըլլալուն աւելի զօրաւոր փաստ մը կայ: Որովհետեւ եթէ զմեզ լուսաւորող լոյսին ամենապիտեղ մէկ կայրը ունենային, իրենց գործերուն մէջ, եթէ ոչ կատարելագործութիւն գտնէ զանազանութիւններ պիտի գործէին. բայց ոչ, ամենք միեւնոյն օրինակին վրայ կ'աշխատին, անոնց գործերուն կարգը ամբողջ տեսակին մէջ նշանակուած է և առանձին մէկու մը բնաւ չի պատկանիր, և եթէ անասնոց հոգի մը վերագրել ուզէինք, պիտի ստիպուէինք իւրաքանչիւր տեսակը հաւատալ, որուն իւրաքանչիւրը հաւատարմապէս պիտի մասնակցէր. ուրեմն այս հոգին ի հարկէ բաժանել պիտի ըլլար և հետեւաբար նիւթական և մերինն շատ տարբեր:

Վասն զի ինչո՞ւ համար, ընդհակառակն, մեր արտադրութեանց և գործերուն մէջ այնպիսի պէտպիւնութիւն և զանազանութիւն կը դնենք, ինչո՞ւ սարուկ նմանութիւնը նոր գիտութեանց մը աւելի կարծէ մեզի: Որովհետեւ մեր հոգին մեքենայ է, ուրիշ մը հոգիէն անկախ է, և մենք միայն մարմնոյն նիւթին զատ, մեր տեսակին հետ հասարակ բան մը չունինք և արգարեւ մենք միմիայն մեր ցետին կառողութիւններով կը նմանինք անասնոց:

Եթէ ներքին զգայութիւնները նիւթին վերաբերէին և մարմնամիմաւոր գործարաններէն կախում ունենային, պիտի չտեսնէինք համատեսակ անասնոց, ինչպէս նաեւ մարդոց ըստ, իրենց գործոց մէջ նշանակուած տարբերութիւնները կ'աւագոյն կազմակերպուածները իրենց բոյները, իրենց գուրջը, իրենց պատանները աւելի հաստատութեամբ, պերճութեամբ, զիւրութեամբ չպիտի շինէին: Եթէ մէկը ուրիշ մ'աւելի հանճար ունենար, չպիտի կարենար զայն այս եղանակով յայտնել:

Իրդ, բոլոր այս բաները տեղի չեն ունենար և երբեք տեղի ունեցած չին. մարմնաւոր գործարաններուն առաւել կամ նուազ կատարելագործութիւնը, ուրեմն ներքին զգայութեանց բնութեան վրայ բնաւ չազդեր. պէտք է եզրակացնել այսպէս թէ՛ կենդանիները այս տեսակ զգայութիւնները բնաւ չունին, թէ ասոնք նիւթին չեն կրնար վերաբերել, ոչ ալ բնութեան համար մարմնաւոր գործարաններէն կախում ունին: Ուրեմն բնական չէ գտնել որ մեր մէջ նիւթէն տարբեր գոյացութիւն մ'ըլլայ, որ այս զգայութիւնները արտադրող և ընդունող նիւթ և պատճառ մ'ըլլայ:

Բայց այս մեր հոգոյն աննիւթութեան փաստերը կրնան աւելի երկարիլ, Մենք ըսինք թէ բնութիւնը միշտ առաջ կ'երթայ և ամէն բանի մէջ կը գործէ անդգալի աստիճաններով և նուրբ երանգներով. այս ճամբարութիւնը որ բնաւ բացառութիւն չի վերցնար, հոս ամենեւին հաստատուիր. անհուն հեռաւորութիւն մը կայ մարդու և ամենէն կատարեալ կենդանւոյն կարողութեանց մէջ. մարդուն տարբեր բնութենէն ըլլալուն յայտնի փաստն է, ինքնիրեն զատ դասակարգութիւն մը կազմելը, որմէ պէտք է իշխել ընդլայն անհուն միջոց մը, կենդանիներուն դասակարգին հասկնալու համար. որովհետեւ եթէ մարդը կենդանիներուն դասակարգէն ըլլար, բնութեան մէջ մարդէն նուազ կատարեալ էակներ պիտի գտնուէին, որոնցմով անդգալապէս և նորբ երանգներով մարդէն մինչեւ հոն իշխել հարկ պիտի ըլլար. բայց այս բանը տեղի չունենար, յանկարծ կ'անցնին խոսուն էակէն նիւթական էակը, մտաւորական գործիւնէն մեքենական գործիւնը, միտքէն և դիտաւորութեան կոյր շարժումը, խորհրդածութեան անարժանքը:

Ահա պէտք եղածէն աւելի ապացուցինք մեր բնութեան գերազանցութիւնը, և այն անհուն տարբերութիւնը զոր Աւարային բայութիւնը մարդուն և կենդանւոյն մէջ դրած է, կը յաւելուէր դարձեալ թէ մարդս բանաւոր էակ մըն է, և ինչպէս որ դրականին և միտականին մէջ միջնորդ չկայ, ինչպէս որ բանաւոր և անբան էակներու միջեւ միջին էակներ չկան, ակներեւ է թէ մարդը կենդանւոյն բնութենէն բոլորովին տարբեր բնութիւն մ'ունի, որ միայն արտաքինով անոր կը նմանի, և թէ զայն այս նիւթական նըմանութեամբ դատելը, երեւոյթէն խաբուելու է, և կամակար աչքը գոցել է լուսոյն գէտ որ երեւոյթը իրականութենէն մեղի զանազանել կուտայ:

ՊԻԻՅՈՆ
Թարգմ. Ա. ՊԱՆԱՊԱՆ-ԿՏՈՅԵԱՆ

ՐՈՍՏԱՆ ՄԷՔՈՒԴ

Կ-Իսթրիկի միջ ընթաց. Պոլսոյ էֆ. Սապպաղեան հաղթէթէրինին, վազը օլան իսթիւրամը իւզէրինէ, տէօրուհնիւ տէֆա օլմազ իւզրէ, միւշարիլէյի հաղթէթէրին՝ Կաթողիկոսարան Պաշ քեաթիպի Գեր. Թէրլիպալեան Գէորգ Գերպի. իւշ հալմէթու Բաբա հաղթէթէրինին հուգուրընա գապուլ օլուսարապ, պիւր չարեւէ սաաթ գատար կէօրիւմիւլլէր տիր: Պոլս միւնապիլիթէ Անարատ Յղուիւն թաւրիզաթը Բահիպէլէրի թարաֆընուան աթալա իւզէրինէ ալթուն սըրմա իւշ իլլէմէ պիւր եսաթըղ իւշ թարիզաթը մէզըլբէ ԼԵԾ-Մայրը Գորը Աղաւնի Անքէրհանըն մէքթուպը թագստիմ Իտիլմիշ օլմաղլէ, Ջաթը Հալմէթանէլէրի՝ հէտիլէյի մէզըլբէրէյի ճէմալը խօշուտիլթիլ պիւր գապուլ, Բահիպէլէրին հիւնէր վէ մարիթիլթիլ թագստիլէ, պէնանը մազուգիլթիլ:

*. Էրմէնի բաթրիգխանէսի գարու
հասը Արիւսէֆ.՝ Կէլէն կիւն Մապէնը
Մահունա ազիւթը իյլէմի, տիր :

Մանիպի իմբրեազ վե մեսուլը դադերա
Հով շվհհ.թ. ԹՈՒԱՅԵԱՆ